ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

29 հոկտեմբերի, 2021 թվականի № 59-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1674-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը և հաշվի առնելով, որ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունն (այսուհետ՝ Ընկերություն) ազատվել է 2020 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ առաջացած՝ 377,548.9 հազ. ՀՀ դրամ շահութաբաժնի վճարումից համաձայն վերոնշյալ ՀՀ կառավարության որոշման, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ավելացնել Ընկերության կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումից ազատված՝ Ընկերության 2020 թվականի գործունեության արդյունքներով առաջացած՝ 377,548,900 ՀՀ դրամ շահութաբաժնի գումարի չափով՝ մեծացնելով Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:
2. Ելնելով Ընկերության բաժնետոմսերից յուրաքանչյուրի անվանական արժեքի հստակեցման անհրաժեշտությունից՝ ի լրումն սույն որոշման 1-ին կետով նախատեսված գումարին, Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնել ևս 86,567.28 ՀՀ դրամի չափով՝ մեծացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:
3. Ընկերության մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը սահմանել 130.00 ՀՀ դրամ և հաստատել Ընկերության կանոնադրական կապիտալի չափը՝ 2,072,292,560 ՀՀ դրամ:

4. Ընկերության կանոնադրությունում կատարել և հաստատել հետևյալ փոփոխությունները.

    4.1. Ընկերության կանոնադրության 4.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «4.1. «Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,072,292,560 (երկու միլիարդ յոթանասուներկու միլիոն երկու հարյուր ինսուներկու հազար ինսուներկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) ՀՀ դրամ: Այն բաժանված է 15,940,712 (տասնհինգ միլիոն ինը հարյուր քառասուն հազար յոթ հարյուր տասներկու) հատ սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 130.00 (մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով:»

5. Հանձնարարել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարին՝ ապահովել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշմամբ պայմանավորված փոփոխությունների պետական գրանցման նպատակով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

29 հոկտեմբեր, 2021 թվականի

ք. Երևան